Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(26 դեկտեմբերի, 2016 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Աստուածային եւ երկնային շնորհ,
որ միշտ ընդ պէտս Սրբոյ Եկեղեցւոյ»
(Շարական):

Այսօր, սիրելի՛ հավատացյալներ, դեկտեմբեր 26, յուրտ եւ ոչ բարենպաստ եղանակ է, սակայն ամենքս մեկտեղվել ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ աղոթակից լինելու եւ խնդրելու առաջին նահատակ ու առաջին սարկավագ Ս. Ստեփանոս վկայի բարեխոսությունը բոլոր այն սարկավագների համար, ովքեր իրենց ծառայական կերպի մեջ են Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բոլոր խորաններում՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից սկսյալ մինչեւ հեռավոր թեմերի եկեղեցիները: Այսօր բոլորով՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեր ուխտապահ միաբանությունը եւ դո՛ւք, սիրելի՛ հավատացյալներ, աղոթք բարձրացնենք նրանց ծառայության համար, նրանց հոգեւոր սպասավորության մեջ էլ ավելի անկոտրում եւ նվիրյալ լինելու համար:

Այսօր, սիրելինե՛ր, ձեր ու մեր աղոթքների շնորհիվ, երբ միաձայն ասում էինք «արժանի են», այս Ս. Սեղանի վրա կանգնած 31 կիսասարկավագներն արժանացան սարկավագական ձեռնադրության:

Այս օրն ուրախալի է ոչ միայն նրանց համար, ում դեմքին ամբողջ արարողության ընթացքին կարող էիք տեսնել՝ վախ, երկյուղ, բայց միաժամանակ ամուր հավատք, պատրաստակամություն, ուժ եւ կորով՝ տանելու այն լուծը, որ ուրարի ձեւով ձեռնադրող եպիսկոպոսի կողմից դրվեց նրանց ուսերին: Դուք տեսաք որոշակի շարժումներ, տեսաք՝ ինչպես նրանք բարձրացան Ս. Խորան, ծունկի եկան. ձեռք դրեցինք գլուխներին, աղոթք ասացինք, նրանք դարձան դեպի ձեզ եւ խնկարկեցին:

Սրանք տեսանելի երեւույթներ են, որոնց տակ տեղի ունեցավ մի խոր-հուրդ՝ Ս. Ձեռնադրություն. մենք չտեսանք, թե ինչպես նրանք սարկա-վագներ դարձան, այլ հավատում ենք եւ ընդունում այն ավանդությունը, որ հաստատվել է առաքյալների կողմից:

Եւ այսօր, սիրելինե՛ր, Ս. Ստեփանոս Նախավկայի տոնի օրը, Գեւորգ-յան հոգեւոր ճեմարանի, Վազգենյան հոգեւոր դպրանոցի եւ Քահանա-յից լսարանի 31 սաներ, ովքեր երեկ ծնրադիր Իջման Ս. Սեղանի առջեւ, այսօր, Ավագ Ս. Սեղանի վրա ձեռնադրվեցին եւ դարձան սարկավագներ: Նրանք, վստահ եմ, որ իրենց ուսումնառության տարիներին կարդացել եւ բավական գիտելիքներ են ամբարել եւ այսօր էլ, երբ արժանացել են ձեռնադրությանը, ձեր արժանի հորջորջումը երբեք, այս պահից սկսյալ, չպիտի որեւէ մեկին եւ ձեզ, սիրելի՛ հավատացյալներ ու ծնողներ, հուսա-խաբ անի: Ես տեսնում եմ ձեզ, տեսնում եմ ձեր գորովալից հայացքնե-րը, շատերի ծնողները, ընկերները ուսումնակիցները եւ համշիրակներն այստեղ են:

Դո՛ւք, սիրելի՛ նոր ձեռնադրյալ սարկավագներ, մինչեւ Ս. Սեղան բարձրանալն ունեիք սպասումներ, երազներ, մտածումներ. վստահ եմ, որ յուրաքանչյուրդ ձեր կյանքի համար կազմել եք ինչ-որ ծրագրեր ու աղոթք եք բարձրացնում Աստծուն, որ այդ ամենն ի կատար ածվի: Այդ ճանապարհն սկսվեց ձեր մուտքով ճեմարան, հասավ այս Ս.Սեղան ու դեռ պիտի շարունակվի: Մենք, որպես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբա-նություն, աղոթող ենք ձեզ համար: Վստահ եմ, որ այստեղ ներկա յու-րաքանչյուր հավատացյալ աղոթող է ձեզ համար, եւ խնդրենք Տիրոջից, որ բարեխոսությամբ Ս. Ստեփանոսի, որ լի էր շնորհներով եւ հոգով, այդ շնորհներն ու հոգին փոխանցի ձեզ. նա նահատակվեց եւ իրեն քարկո-ծողների համար ասաց Աստծուն. «Հա՛յր, թող նրանց մեղքերը, որովհե-տեւ չեն իմանում՝ ինչ են գործում» (հմմտ. Գործք. Է. 59): Եւ քարկոծու-մից առաջ նա հաստատեց իր ուղիղ դավանությունն ու հավատքը, որը գայրացրեց հրեաներին, եւ քարկոծեցին նրան ու տեսան, որ դեմքը պայ-ծառացել էր հրեշտակի պես: Թող այդ հրեշտականման մաքրությունն ու պայծառությունը, որ տեսանելի է ձեր պատանեկան հայացքներին, երբեք չխամրի, որովհետեւ այդ սուրբ առաքելությանը, որ այսօր ձեռնադրող հոգեւորականի կողմից, միաբանության եւ հավատացյալների անունից կոչեցի, դուք արժանի եք, ամենքն ասացին՝ «արժանի եք»: Թող աստվա-ծային շնորհը, որ «միշտ լցնում է եկեղեցական պետքերը», ձեր 31 ան-հատների միջոցով լցնի մեր Ս. Եկեղեցին:

Ցնծա՛ այսօր Եկեղեցի Աստուծոյ՝ զքո վայելչապէս տօնէ զյիշատակս,
ո՛վ Սուրբ Ստեփաննոս, մեծ եւ պատուական անուանիդ ի վկայս,
աղաչեա՛ զԱստուած շնորհել մեզ զկեանս անվախճան *(Շարական)*

Ես դնեմ զձեռս ի վերայ սորա, եւ դուք ամենեքեան աղօթս արարէք,
զի արժանի լինիցի սա զաստիճան սարկաւագութեանս՝ անարատ պահել
առաջի Սրբոյ Սեղանոյս Աստուծոյ *(Մաշկոց ծիսարան)*

Խունկ մատուցանեմ առաջի Քո, Քրիստո՛ս, բուրումն հոգեւորական:
Ընկալ ի սուրբ, յերկնային եւ յիմանալի Քո մատուցարանդ ի հոտ անուշից
(Խորհրդաւորեալ Սրբոյ Պատարագի)

Մեր առաքելությունը մեծ է եւ կարեւոր: Դուք այսօր Ս. Էջմիածնում եք, մեկ կամ երկու տարի հետո չգիտեք, թե ուր պիտի լինեք եւ ինչպիսի ծառայության մեջ: Անկոտրո՛ւմ եղեք, որպեսզի Ս. Ստեփանոսի հոգով եւ շնորհներով ու բարեխոսությամբ կարողանանք վստահությամբ, ուրախությամբ հիշել եւ ասել, որ այս զավակներին՝ 31 հոգուն, մենք ենք ձեռնադրել եւ ընծայել Եկեղեցուն:

Այս գեղեցիկ օրվա առիթով ցանկանում եմ շնորհավորել մեր Հայոց Հայրապետին, հոգեւոր կրթական հաստատությանց վերատեսուչին, տեսուչին, նաեւ մեր լուսարարապետ Սրբազան Հորը, միաբան մեր եղբայրներին եւ ձեզ, սիրելի՛ հավատացյալներ՝ մաղթելով, որ Ս. Ստեփանոսի շնորհները անպակաս լինեն մեզանից, եւ այնպիսի ոգի, այնպիսի հավատք ունենանք մենք, ինչպիսին կա այսօր, որ ստիպել ու առաջնորդել է այս եկեղեցի՝ աղոթակից եւ ուրախակից լինելու բոլորիս:

Թող Աստված օրհնի ամենքիս այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն: